ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/11582-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-861-10.02.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 254 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-861-10.02.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է փոփոխել Ազգային ժողովում պետական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններին ներկայացվող աշխատանքային ստաժերի չափանիշները:

Նախագծին կից հիմնավորման (այսուհետ՝ հիմնավորում) համաձայն նախագծով առաջարկվող Ազգային ժողովում պետական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններին ներկայացվող աշխատանքային ստաժի չափանիշների փոփոխումը պայմանավորված է այդ չափանիշների՝ 2001 թվականի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-272 օրենքին նախկինում չհամապատասխանեցվելու և դրա հետևանքով առաջացած խտրականությունը վերացնելու անհրաժեշտությամբ: Հիմնավորման համաձայն նախագծով առաջարկվող փոփոխությամբ կվերացվի առաջացած խտրականությունը, և կապահովվի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի իրացումը:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ առաջարկվող փոփոխության հիմնավորմամբ նպատականշված հարցը նախագծով լուծում չի ստանում, քանի որ առաջարկվում է Ազգային ժողովում պետական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններին ներկայացվող աշխատանքային ստաժի չափանիշները համապատասխանեցնել 2001 թվականի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-272 օրենքին, որը, սակայն, ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի մարտի 23-ի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-205-Ն օրենքով: Հիշյալ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար աշխատանքային ստաժի նոր չափանիշներ, բացի դրանից, փոփոխվել է նաև քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման և դասակարգման մեթոդաբանությունը, նախատեսվել է պաշտոնների 2 խումբ՝ ղեկավար և մասնագիտական: Այսինքն, փոփոխության արդյունքում Ազգային ժողովում պետական ծառայողների աշխատանքային ստաժի չափանիշները շարունակելու են տարբերվել 2018 թվականի հուլիսի 1-ից գործող և կիրառվող քաղաքացիական ծառայողների համար նախատեսված աշխատանքային ստաժի չափանիշներից: Հետևաբար, նախագծով առաջարկվող աշխատանքային ստաժի չափանիշների փոփոխությունը չի կարող վերացնել հիմնավորման մեջ որպես խտրականություն նշված հանգամանքը:

Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած և իրականացվող քաղաքականության շրջանակներում հանրային ծառայության համակարգի բարեփոխումների առաջնային խնդիրներից է պետական ծառայության հատվածականության վերացումը և քաղաքացիական ծառայության ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց շրջանակի ընդլայնումը: Վերոգրյալի համատեքստում ընդունվել են «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն և «Քաղաքացիական ծառայության մասին» 2018

թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքները: Ի թիվս այլի, հիշյալ օրենքների ընդունումից հետո նախատեսվում է Ազգային ժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրում: Այսինքն, Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողները համարվելու են քաղաքացիական ծառայողներ և նրանց վրա տարածվելու են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի կարգավորումները, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքային ստաժի չափանիշները: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում են պետական ծառայության տեսակները՝ քաղաքացիական ծառայություն, դիվանագիտական ծառայություն, մաքսային ծառայություն, զինվորական ծառայություն և այլն, որոնց թվում Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը որպես պետական ծառայության առանձին տեսակ նախատեսված չէ: Հաշվի առնելով Ազգային ժողովի աշխատակազմի աշխատանքներին բնորոշ որոշ առանձնահատկություններ՝ 2020 թվականի հունվարի 21-ի «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-46-Ն օրենքի 3-րդ հոդվածով խմբագրվող 160-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է, որ Ազգային ժողովի աշխատակազմում կառավարչական իրավահարաբերությունների, քաղաքացիական ծառայության, ինչպես նաև աշխատակազմի կազմակերպման և գործունեության այլ առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Ազգային ժողովի աշխատակազմում կառավարչական իրավահարաբերությունների, քաղաքացիական ծառայության, ինչպես նաև աշխատակազմի կազմակերպման և գործունեության այլ առանձնահատկությունները սահմանող օրենքն ընդունվում է մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը: Ուստի նախագծով ակնկալվող արդյունքին հնարավոր է հասնել նշված օրենքի ընդունմամբ:

Այդուհանդերձ, որպես խնդրի լուծման ժամանակավոր տարբերակ (մինչև համապատասխան օրենքի ընդունումը և Ազգային ժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրումը) կարող է դիտարկվել քաղաքացիական ծառայության պաշտոնների համար աշխատանքային ստաժի գործող չափանիշների սահմանումը Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողների պաշտոնների համար:

Ուստի, առաջարկում ենք օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխա-տակազմում պետական ծառայության մասին» 2009 թվականի հունիսի 11-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասում «աշխատանքային ստաժի և փորձի առնվազն» բառերը փոխարինել «կրթության և աշխատանքային ստաժի» բառերով:»:

2. 2-րդ հոդվածը, պաշտոններին ներկայացվող պահանջների աստիճանակարգության տրամաբանության շրջանակներում, շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, ստորաբաժանման ղեկավարի, այդ թվում՝ ստորաբաժանման ներքին միավորի ղեկավարի պաշտոնն զբաղեցնելու դեպքում՝ բարձրա-

գույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.»:

3. 3-րդ հոդվածը, որպեսզի Ազգային ժողովի աշխատակազմում արդեն իսկ պետական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցրած անձինք չափանիշների փոփոխման արդյունքում չհայտնվեն անբարենպաստ վիճակում, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ արդեն իսկ զբաղեցրած անձինք օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածով կատարվող փոփոխության արդյունքում օրենքում նախատեսվող՝ համապատասխան պաշտոններ զբաղեցնելու համար նոր չափանիշներին բավարարող:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 254 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի պարտակա-նությունները կատարող Վաչե Քալաշյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հան-րապետության օրենքի նախագիծը (Պ-861-10.02.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հա-րակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.03.2021

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-861-10.02.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» 2009 թվականի հունիսի 11-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետի «առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ» բառերը փոխարինել «առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ» բառերով:

2) 2-րդ կետի «վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական» բառերը փոխարինել «վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական» բառերով:

3) 2-րդ կետի «վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերը փոխարինել «վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում)» բառերով եւ կետադրական նշանով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետի «առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական» բառերը փոխարինել «առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական» բառերով:

2) 3-րդ կետի «առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերը փոխարինել «առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *աշխատակազմում պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության տեսակ է:*

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված է հետևյալը.

«1. Պետական ծառայության պաշտոնների անձնացուցակն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և վիճակի առնվազն հետևյալ չափանիշները.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ

քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ծառայության առնվազն երեք տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.

3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

4) պետական ծառայության կրտսեր պաշտոններ՝ առնվազն բարձրագույն կրթություն:

2. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3. Պետական ծառայության պաշտոնի անձնագրում աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները կարող են փոփոխվել միայն այն դեպքում, եթե տվյալ պաշտոնը թափուր է»:

«Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 16-ի ՀՕ-172-Ն օրենքի՝ դրա գործողության ոլորտին վերաբերող 2-րդ հոդվածով նախատեսված էր հետևյալը (օրենքը ուժը կորցրել է 20.11.2019թ.)՝ *«1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ մարմիններում հանրային ծառայության պաշտոնների տեսականցանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա.*

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում.

2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում.

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում.(...)»:

«Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 16-ի ՀՕ-172-Ն օրենքի՝ *հանրային ծառայությանը վերաբերող* 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանրային ծառայությունը պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, վերկարգի ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:(...)»:

«Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 16-ի ՀՕ-172-Ն օրենքի՝ *«Հանրային ծառայության հիմնական սկզբունքները»* վերնագրությամբ 6-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայության հիմնական սկզբունքներ են դիտարկվել *օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարությունը, քաղաքացիների համար հանրային ծառայության հասկանալի մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան:*

«Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի 10-րդ հոդվածով՝ մինչ ««Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-104-Ն օրենքի ընդունումը, նախատեսված է եղել հետևյալ կարգավորումը.

«1. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատվում (փոփոխվում) են քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

բ) քաղաքացիական ծառայության **գլխավոր պաշտոններ**՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն **հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան**, կամ վերջին տասը տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

գ) քաղաքացիական ծառայության **առաջատար պաշտոններ**՝ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն **երկու տարվա ստաժ**, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

դ) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններ՝ առանց աշխատանքային ստաժի:

2. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացուցակում ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.

ա) քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

բ) քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

գ) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անվանացիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում:»:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-104-Ն օրենքի 3-րդ հոդվածով «Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի 10-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ.

*«1) 1-ին մասի «բ» կետի «կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին չորս տարվա ընթացքում» բառերը փոխարինել «կամ առնվազն **երեք տարվա** քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում» բառերով, իսկ «կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերը փոխարինել «, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն **երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ**, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում)» բառերով.*

2) 1-ին մասի «գ» կետի «առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում» բառերը փոխարինել «առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում» բառերով, իսկ «կամ առնվազն երեք տարվա» բառերը փոխարինել «կամ առնվազն երկու տարվա» բառերով.

3) 2-րդ մասի «2015» թիվը փոխարինել «2020» թվով.

4) 2-րդ մասի «ա» կետը «ստաժ» բառից հետո լրացնել «, որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում» բառերով.

5) 2-րդ մասի «բ» կետը «ստաժ» բառից հետո լրացնել «, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում)» բառերով:»:

Հարկ է նկատել, որ քննարկվող փոփոխությունները կատարելիս համանման փոփոխություններ չեն կատարվել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածում, ինչը ենթադրելի և տրամաբանական կլիներ՝ հաշվի առնելով *հանրային ծառայության հիմնական սկզբունքները*, ինչպես նաև քննարկվող օրենքներում հանրային ծառայության տեսակների համար նախնական նախատեսված՝ համեմատելի և փոխկապակցված կարգավորումները:

Միաժամանակ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրության (այսուհետև՝ Սահմանադրություն) 49-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք, մանրամասները սահմանվում են օրենքով:*

Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալ կարգավորումը.

«Ծնորդականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնություններ պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»

Օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները երաշխավորվում են Սահմանադրությամբ (28-րդ և 29-րդ հոդվածներ), ինչպես նաև մի շարք կարևորագույն միջազգային փաստաթղթերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (7-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (26-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (14-րդ հոդված) և այդ կոնվենցիային կից 12-րդ Արձանագրությամբ: Այդ իրավաղրույթներից բխում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կիսախոցվեն ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ՝ *«(...) Խոցելիությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:*

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն՝ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, *Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom, 28 May 1985* վճռում Եվրոպական դատարանը նշել է, *«(...)Տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդյարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:*

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքի և զբաղվածության ոլորտում խտրականության վերաբերյալ» թիվ 111 կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է 1995թվականի հուլիսի 29-ից) 1-ին հոդվածին, համաձայն որի՝ աշխատանքի ոլորտում խտրականություն է համարվում ոչ միայն ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական համոզմունքի, ազգային ծագման կամ սոցիալական պատկանելության հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որոնց հետևանքով վերանում կամ խոչընդոտվում է աշխատանքի ու զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարությունը, այլ նաև աշխատանքի և զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարության վերացմանը կամ հաղթահարմանը հանգեցնող ցանկացած այլ տարբերակում, մերժում կամ նախապատվություն, այսինքն, ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, ինչը կարող է դիտարկվել որպես ժամանակավոր լուծում՝ մինչև հանրային և քաղաքացիական ծառայությունների ոլորտում կատարվող բարեփոխումների ամբողջական իրացումը:

Մասնավորապես՝ առաջարկում ենք ամրագրել հետևյալ կարգավորումը.

«1. Պետական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ զինական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում (վերջին պահանջը կիրառվում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար դիմած անձանց ստաժի հաշվարկման դեպքում) կամ քաղաքացիական ծառայության առնվազն երեք տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.

3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

4) պետական ծառայության կրտսեր պաշտոններ՝ առնվազն բարձրագույն կրթություն:

(...):»: